

Յուրահատուկ ռեսուրսի մոդել խնդիրներ

Թանկագին ուսանողներ, գրաֆիկների միջոցով նպատակ չունեմ ընդլայնել արստրակտ գեղանկարչության Ձեր իմացությունը, այդ նպատակով կարող եմ ուսումնասիրել օրինակ՝ Կանդինսկու կամ Պիկասոյի արվեստը: Ուստի՝ յուրաքանչյուր անգամ համոզվեք, որ Ձեզ համար պարզ է, թե տվյալ գծապատկերում յուրաքանչյուր գիծ ինչու է հատկապես այդպես գծված, և այն ինչպես կտեղաշարժվի, եթե այս կամ այն փոփոխականը փոխվի:

ԲԱՌԱՐԱՆ

- Սեմինարի մասնակից - ուսանող, ով պատրաստվել է սեմինարին և իր մասնակցությամբ ստեղծում է արժեք:
- Սեմինարի հակամասնակից - ուսանող, որի մարմինը պարզապես գտնվում է լսարանում և շարունակ փսփսում է՝ խանգարելով արժեքի ստեղծմանը:
- Կարգին ուսանող - ուսանող, ով պարտադիր չէ, որ սովորում է, բայց պարտադիր է, որ կիրք է:

Ուշադրություն: Գրավոր քննությունը յուրաքանչյուր պնդում անհրաժեշտ է հանգամանորեն հիմնավորել:

Հարգելի ուսանողներ, դասախոսությունները օրգանապես փոխադրված են: Արիստոտելի ձևակերպմամբ՝ ամբողջը ավելին է, քան նրա մասերի գումարը (Մետաֆիզիկա, գիրք 8, 1045a.8-10)

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

1. Փոքր բաց տնտեսությունն արտահանում է x ապրանք, ներմուծում է y :

Վերլուծեք ազդեցությունը.

- ա) x և y ապրանքների թողարկման վրա,
- բ) աշխատավարձի և յուրահատուկ կապիտալների վճարների վրա,
- գ) արտաքին առևտրի վրա,

երբ.

1.1. y ապրանքի գինը կրճատվում է:

Պատասխան

Քանի որ $VMP_{Ly} = p_y MP_y$, ապա y -ի գնի անկումը կրճատում է y -ի արտադրությունում աշխատանքի սահմանաչին արդյունքի արժեքը:

Աշխատանք ռեսուրսի շուկան հավասարակշռվում է, երբ աշխատավարձը՝ w , կրճատվում է և $L_1 L_2$ քանակի աշխատանք ռեսուրս y -ի արտադրությունից տեղափոխվում է x -ի արտադրություն: x -ի թողարկումն ընդլայնվում է, y -ինը՝ կրճատվում:

Արտադրական հնարավորությունների կորի վրա տնտեսությունը տեղաշարժվում է ներքև-աջ: Քանի որ $\hat{p}_y < 0$, ապա x -ի հարաբերական գինը՝ \hat{p}_x / \hat{p}_y , բարձրացել է:

Այս և հաջորդող խնդիրների պատասխանները գրել եմ սեղմ: Ուսանողը, եթե ուսումնասիրել է նախորդ թեմաները և հասել է այս թեմային, անհրաժեշտաբար բավարար պատրաստություն պետք է ունենա իմ գրածի տրամաբանական ընթացքն ընկալելու համար: Նույն պատճառով գծապատկերները կամ չեմ գծել, կամ սոսկ ուրվագծել եմ:

Քննությունը գծապատկերները գծելը և պնդումները հիմնավորելը պարտադիր է:

Անտեղյակ, կլանքից դժգոհ, կլանքի գեղեցիկը շտեմնող ուսանողին ի գիտություն՝ դասախոսությունում բոլոր գծապատկերները գծված են, իսկ պնդումները հիմնավորված են:

Բոլոր այն ուսանողներին, որոնք նախկինում չեն սովորել, կամ անհրաժեշտ չափով չեն սովորել ի գիտություն՝ կեսից սովորելն անհրաժեշտ արդյունք չի տա, պետք է սկսեք սկզբից:

Կարգալու, կարդացածը հիշելու, կարդացածը հասկանալու խնդիր ունեցողներին ի գիտություն կրկնում եմ՝ պետք է սկսեք սկզբից:

Անվանական աշխատավարձը կրճատվել է: Բայց իրական աշխատավարձի վրա ազդեցությունը միարժեք չէ (նեոդասական երկակիություն): Իրական աշխատավարձն արտահայտված y -ով բարձրացել է, արտահայտված x -ով նվազել է:

x -ի յուրահատուկ կապիտալի՝ K_x , անվանական և իրական վճարները բարձրացել են, քանի որ եռանկյունը և L/K_x ընդլայնվել են:

y -ի յուրահատուկ կապիտալի՝ K_y , անվանական և իրական վճարները նվազել են, քանի որ եռանկյունը և L/K_y կրճատվել են:

Քանի որ y -ի գինը կրճատվել է, ապա ապրանքների սպառումը փոխվում է՝ պայմանավորված փոխարինման և եկամտի էֆեկտների դրսևորմամբ: Միևնույն ժամանակ, սպառման վրա ազդում է ռեսուրսների իրական եկամուտների փոփոխությունը (եկամտի աճի էֆեկտ):

Օրինակ՝ K_x -ի սեփականատերերի իրական եկամուտն աճել է, և y -ի գինը նվազել է:

- K_x -ի սեփականատերերի կողմից y -ի սպառումը կընդլայնվի, քանի որ,

--- եկամտի էֆեկտը դրական է (իրական եկամուտն աճել է գնի անկման հետևանքով),

--- փոխարինման էֆեկտը դրական է (հարաբերական գինը նվազել է, և x -ի սպառումը կփոխարինվի y -ով),

--- եկամտի աճի էֆեկտը դրական է (իրական եկամուտն աճել է՝ x -ի արտադրություն աշխատանք ռեսուրսի ներհոսքի հետևանքով):

- x -ի հարաբերական գինը բարձրացել է, թեպետ բացարձակ գինը չի փոխվել: Հետևաբար՝

--- փոխարինման էֆեկտը բացասական է (x -ի սպառումը կփոխարինվի y -ով),

--- եկամտի էֆեկտը դրական է (y -ի գնի անկման շնորհիվ սպառողների իրական եկամուտն ընդհանուր առմամբ աճել է),

--- եկամտի աճի էֆեկտը դրական է (իրական եկամուտն աճել է՝ x -ի արտադրություն աշխատանք ռեսուրսի ներհոսքի հետևանքով):

Ուստի՝ եթե x -ի սպառման վրա իրական եկամտի աճի ազդեցությունը գերակշռում է փոխարինման էֆեկտին, ապա K_x -ի սեփականատերերի կողմից x -ի սպառումը կընդլայնվի: Հակառակ դեպքում՝ x -ի սպառումը կկրճատվի:

Համարենք՝ K_x -ի սեփականատերերի եկամուտը երկրի ընդհանուր եկամտի գերակշիռ մասն է կազմում, և երկրի ընդհանուր սպառումը փոխվում է այնպես, ինչպես K_x -ի սեփականատերերի սպառումն է փոխվում:

Այսպես՝ եթե x -ի տեղական սպառումը կրճատվում է, ապա x -ի արտահանումն աճում է (առավել ևս, որ x -ի արտադրությունն աճել է):

Միևնույն ժամանակ, քանի որ y -ի տեղական սպառումն ընդլայնվում է, ապա y -ի ներմուծումն աճում է (առավել ևս, որ y -ի արտադրությունը կրճատվել է):

Իսկ եթե x -ի տեղական սպառումն աճում է, ապա x -ի արտահանումը կարող է և՛ աճել, և՛ նվազել: Քանի որ x -ի արտադրությունն աճել է, ապա արտահանումը կաճի, եթե արտադրության հավելաճը գերազանցի սպառման հավելաճին:

Հարգելի ուսանողներ, ստորև հակիրճ նկարագրում եմ մի շարք միկրոտնտեսագիտական հասկացություններ, որոնք կիրառել եմ այս խնդրի նկարագրությունում:

Եկամտի և փոխարինման էֆեկտներ

Եկամտի էֆեկտ - ապրանքի պահանջարկի փոփոխության այն մասը, որը հետևանք է գնի փոփոխության արդյունքում սպառողի իրական եկամտի փոփոխության:

Փոխարինման էֆեկտ - ապրանքի պահանջարկի փոփոխության այն մասը, որը հետևանք է գնի փոփոխության արդյունքում հարաբերական գների փոփոխության: Փոխարինման էֆեկտի դեպքում համարում ենք, որ սպառողի օգտակարությունը մնում է նույն մակարդակում:

Այսինքն՝ երբ X ապրանքի գինը բարձրանում է

- այն այլ ապրանքների համեմատ թանկանում է, և սպառողը հնարավոր է X ապրանքը փոխարինի այլ ապրանքներով (փոխարինման էֆեկտ),

- սպառողի իրական եկամուտը նվազում է, և հնարավոր է սպառողը կրճատի X -ի պահանջարկը (եկամտի էֆեկտ):

Գծանկարում սպառողը սկզբնապես սպառում է A կետում: Այնուհետև X ապրանքի գինը կրճատվում է, և բյուջետային գիծը համապատասխանորեն տեղաշարժվում է: Նոր իրավիճակում սպառողը սպառում է D կետում, որում նրա օգտակարությունը ավելի բարձր է:

A -ից D անցումը կարող ենք տարանջատել երկու էֆեկտների՝ փոխարինման և եկամտի:



Տարբերակ 1: C կետն արտահայտում է այն հավասարակշռությունը, երբ սպառողի օգտակարությունը հավասար է D կետի օգտակարությանը, բայց ապրանքների հարաբերական գին չի փոխվել: A -ից C շարժն արտահայտում է եկամտի էֆեկտը, քանի որ իրական եկամուտն աճել է, բայց հարաբերական գինը չի փոխվել:


Իսկ C -ից D շարժն արտահայտում է փոխարինման էֆեկտը, քանի որ իրական եկամուտը մնացել է նույնը, բայց հարաբերական գինը փոխվել է:

Տարբերակ 2: B կետն արտահայտում է այն հավասարակշռությունը, երբ սպառողի օգտակարությունը նախկին մակարդակում է, բայց ապրանքների հարաբերական գին փոխվել է: A -ից B շարժն արտահայտում է փոխարինման էֆեկտը, քանի որ իրական եկամուտը մնացել է նույնը, և հարաբերական գինը փոխվել է:

Իսկ B -ից D շարժն արտահայտում է եկամտի էֆեկտը, քանի որ իրական եկամուտն աճել է, բայց հարաբերական գինը չի փոխվել:

Եկամտի աճի էֆեկտ

Սպառողի եկամտի աճի դեպքում, եթե նախապատվությունները և գները նույնն են, բյուջետային գիծը զուգահեռաբար տեղաշարժվում է վեր, և սպառողն ընտրում է սպառման նոր օպտիմալ համախումբ, որում բոլոր կամ որոշ ապրանքների սպառումն ավելի մեծ է:



- 1.2. Աշխատանք ռեսուրսի՝ L -ի քանակն ընդլայնվում է (երկիրը փոքր է, ուստի՝ ապրանքների գները տրված են):

Պատասխան

Երկու արտադրություններն էլ ընդլայնվում են:

Աշխատավարձն իրական արտահայտությամբ կրճատվում է:

Յուրահատուկ կապիտալների իրական վճարներն աճում են:

Արտադրական հնարավորությունների սահմանը համաչափորեն ընդլայնվում է, և եթե նախապատվությունների փոփոխություն տեղի չի ունենում, ապա L -ի, L' -ի սպառումն աճում են:

Այսպիսով՝ X -ի և L' արտադրությունը, L' սպառումն աճում են են: Եթե դրանց աճերը չեզոք են, ապա X -ի արտահանումն աճել է:

Այս հարցը քննատմում կարող է ձևակերպվել օրինակ այսպես՝ պատկերեք և բացատրեք այն դեպքը, երբ սպառման աճը չեզոք է, իսկ արտադրության աճը դեմ առևտրին է:

- 1.3. Կապիտալի արտահոսքի հետևանքով K_y -ը կրճատվում է (ապրանքների գները տրված են):

Պատասխան

MP_{LY} -ը կրճատվում է:

L_x և Q_x ընդլայնվում են:

L_y և Q_y կրճատվում են:

Անվանական և իրական w -ն կրճատվում են:

Իրական r_y -ը և r_x -ը աճում են: Այսպես՝ իրական w -ն նվազել է, $\Rightarrow MP_{Li}$ նվազել է, $\Rightarrow K_i/L$ նվազել է, $\Rightarrow L/K_i$ աճել է, \Rightarrow յուրահատուկ կապիտալների իրական վճարները բարձրացել են:

Արտադրական հնարավորությունների սահմանը անհամաչափորեն ներս է տեղաշարժվում: Եթե սպառման փոփոխությունը չեզոք է, ապա l' x -ի, l' y -ի սպառումն էլ կրճատվում են:

Քանի որ x -ի թողարկումն աճել է, բայց սպառումը կրճատվել է, ապա x -ի արտահանումն աճել է:

Կիրառական հարց՝ գիտելի՞նք ամրապնդելու նպատակով

2. X ապրանքն արտադրվում է աշխատանքի և հողի, Y ապրանքը՝ աշխատանքի և կապիտալի կիրառմամբ: Աշխատանքը կատարյալ շարժուն է երկու արտադրությունների միջև:


Հայաստանը և Ռուսաստանը ունեն նույն քանակի աշխատանք և կապիտալ, բայց

Ռուսաստանում առկա է ավելի շատ հող: Տեխնոլոգիան երկու երկրներում նույնն է:

Որքա՞ն են ռեսուրսների վճարները:

Պատասխան

- Ազատ առևտրի դեպքում ապրանքների գները կհավասարվեն:
- Քանի որ Ռուսաստանում հողի քանակն ավելի շատ է, ապա հողի սահմանային հատուկ ցածր, քան Հայաստանում:
Այսինքն՝ հողի իրական վճարը Ռուսաստանում ցածր է, քան Հայաստանում:
- Համապատասխանորեն՝ x -ի արտադրությունում աշխատանքի սահմանային արդյունքը Ռուսաստանում բարձր է, քան Հայաստանում ($T/L^{Ռուս} > T/L^{Հայ}$, T -ն հողն է):
- Աշխատանքը շարժուն ռեսուրս է, ու տվյալ երկրում x -ի ու y -ի արտադրություններում աշխատավարձը նույնն է:
- Հետևաբար՝ աշխատավարձը Ռուսաստանում բարձր է, քան Հայաստանում:



- Քանի որ x -ի արտադրությունում աշխատանքի սահմանային արդյունքը Ռուսաստանում բարձր է, ապա x -ի արտադրությունում Ռուսաստանում ավելի շատ աշխատանք ռեսուրս կներգրավվի, քան Հայաստանում:
- Համապատասխանորեն՝ y -ի արտադրությունում Ռուսաստանում ավելի քիչ աշխատանք ռեսուրս կներգրավվի, քան Հայաստանում ($L/K^{Ռուս} < L/K^{Հայ} \Rightarrow MP_K^{Ռուս} < MP_K^{Հայ}$):
- Ուստի՝ կապիտալի իրական վճարը Ռուսաստանում ցածր է, քան Հայաստանում: Նկատենք՝ գրաֆիկում կապիտալի ընդհանուր վճարը Ռուսաստանում փոքր է, քան Հայաստանում: Ուստի՝ կապիտալի անվանական վճարը նույնպես Ռ-ում փոքր է

(կապիտալի քանակը երկրներում նույնն է): Իսկ քանի որ ապրանքների գները երկրներում նույնն են, ապա Ռ-ում փոքր է նաև կապիտալի իրական վճարը:

Ինչպե՞ս կազդի ռեսուրսների միջազգային շարժի ազատականացումը:

- Աշխատանք ռեսուրսը Հայաստանից կտեղափոխվի Ռուսաստան այնքան, մինչև աշխատավարձերը երկու երկրներում հավասարվեն:
- Քանի որ ապրանքների գները նույնն են, ապա երկու երկրներում աշխատանքի իրական վճարը կլինի նույնը:
- Քանի որ սկզբում աշխատանք ռեսուրսի քանակը երկու երկրներում նույնն էր, ապա տեղաշարժից հետո Հայաստանում կլինի ավելի քիչ աշխատանք ռեսուրս, քան Ռուսաստանում (բայց Y -ի արտադրությունում ներգրավված աշխատանքի քանակը երկու երկրներում կլինի նույնը):
- Ռուսաստանում հողի և կապիտալի իրական վճարները կբարձրանան, Հայաստանում կնվազեն:
- Քանի որ տեխնոլոգիան և կապիտալի քանակը երկու երկրներում նույնն են, ապա կապիտալի և հողի իրական վճարները երկու երկրներում կհավասարվեն: Այսպես՝ երկու երկրում $\frac{w}{p_i} = MP_{Li}$ նույնն են, $\Rightarrow K/L, T/L$ նույնն են, \Rightarrow կապիտալի և հողի սահմանային արդյունքները երկու երկրներում նույնն են:
- Այսպիսով՝ բոլոր ռեսուրսների գները երկու երկրներում աշխատանքի տեղաշարժից հետո հավասարվում են:
- Հայաստանում երկու ապրանքի արտադրությունն էլ կկրճատվի՝ աշխատանք ռեսուրսի արտահոսքի պատճառով: Ռուսաստանում երկու ապրանքի արտադրությունն էլ կընդլայնվի: Համաշխարհային արտադրությունը կաճի, քանի որ ռեսուրսը տեղափոխվել է արտադրողականության տարբերության պատճառով:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

3. Աշխատանքը շարժուն է, կապիտալը յուրահատուկ, ապրանքներն են x և y :

$$q_x = K_x^{2/3} L_x^{1/3}, \quad q_y = K_y^{2/3} L_y^{1/3}$$

$$K_x = \bar{K}_x, \quad K_y = \bar{K}_y, \quad L_x + L_y = L$$

Ապրանքների գներն են p_x և p_y : Ռեսուրսների վճարներն են w , r_x և r_y :

3.1. Կառուցեք երկրի արտադրական հնարավորությունների սահմանը.

Պատասխան

$$L_x = \frac{q_x^3}{K_x^2}, \quad L_y = \frac{q_y^3}{K_y^2}$$

$$\frac{q_x^3}{K_x^2} + \frac{q_y^3}{K_y^2} = L \quad \Rightarrow \quad q_y = \left[K_y^2 \left(L - \frac{q_x^3}{K_x^2} \right) \right]^{1/3}$$

3.2. Պարզեք ռեսուրսների վարձատրությունը և ապրանքների թողարկումը.

Աշխատավարձ

Աշխատանք ռեսուրսի պահանջարկը որոշվում է, երբ $w = MP_L \times p$

$$x \rightarrow w = p_x \left(\frac{dq_x}{dL_x} \right) = p_x \left(\frac{1}{3} K_x^{2/3} L_x^{-2/3} \right) \quad \tilde{L}_x = K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{3/2}$$

$$y \rightarrow w = p_y \left(\frac{dq_y}{dL_y} \right) = p_y \left(\frac{1}{3} K_y^{2/3} L_y^{-2/3} \right) \quad \tilde{L}_y = K_y \left(\frac{p_y}{3w} \right)^{3/2}$$

Հավասարակշռությունում աշխատանք ռեսուրսն ամբողջովին զբաղված է.

$$K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{3/2} + K_y \left(\frac{p_y}{3w} \right)^{3/2} = L \quad \tilde{w} = \frac{1}{3} \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{2/3}$$

$$\begin{aligned} \frac{\partial \tilde{w}}{\partial p_x} &= \frac{\frac{K_x}{L} \sqrt{p_x}}{3 \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}} \Rightarrow \epsilon = \frac{\partial \tilde{w}}{\partial p_x} \cdot \frac{p_x}{\tilde{w}} = \frac{\frac{K_x}{L} \sqrt{p_x}}{3 \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}} \cdot \frac{p_x}{\frac{1}{3} \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{2/3}} \\ &= \frac{\frac{K_x}{L} p_x^{3/2}}{\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2}} < 1 \end{aligned}$$

$$\frac{\partial \tilde{w}}{\partial L} = -\frac{2}{3} \cdot \frac{1}{3} \left[K_x p_x^{3/2} + K_y p_y^{3/2} \right]^{2/3} L^{-5/2} < 0$$

Նկատենք՝ ապրանքների գների կրկնապատկման դեպքում աշխատավարձը կրկնապատկվում է (իրական աշխատավարձը չի փոխվում):

Բոլոր ռեսուրսների կրկնապատկման դեպքում աշխատավարձը չի փոխվում (ծավալի հաստատուն էֆեկտի հետևանքով):

Մեկ ապրանքի գնի աճի դեպքում աշխատավարձն աճում է, բայց համեմատաբար ավելի քիչ:

Աշխատանքի պաշարի ընդլայնման դեպքում աշխատավարձը կրճատվում է:

Ապրանքների թողարկում

$$\begin{aligned} q_x &= K_x^{2/3} L_x^{1/3} \quad \tilde{q}_x = K_x^{2/3} \left[K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{3/2} \right]^{1/3} = K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{1/2} = K_x \left(\frac{p_x}{3 \frac{1}{3} \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{2/3}} \right)^{1/2} \\ &= K_x \frac{p_x^{1/2}}{\left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}} \end{aligned}$$

$$q_y = K_y^{2/3} L_y^{1/3} \quad \tilde{q}_y = K_y^{2/3} \left[K_y \left(\frac{p_y}{3w} \right)^{3/2} \right]^{1/3} = K_y \left(\frac{p_y}{3w} \right)^{1/2} = K_y \frac{p_y^{1/2}}{\left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}}$$

Երբ երկու ապրանքների գները կրկնապատկվում են, թողարկումը չի փոխվում (գնաճը թողարկման վրա չի ազդում):

Երբ բոլոր ռեսուրսների քանակը կրկնապատկվում է, թողարկումը կրկնապատկվում է (ծավալի հաստատուն էֆեկտի հետևանքով):

X-ի թողարկումն ընդլայնվում է, երբ K_x -ն աճում է կամ K_y -ը կրճատվում է (յուրահատուկ ռեսուրսների ազդեցություն):

Երբ L-ն աճում է, երկու ապրանքների թողարկումն էլ ընդլայնվում է:

Որևէ ապրանքի գնի աճն ընդլայնում է այդ ապրանքի թողարկումը և կրճատում է մյուս ապրանքի թողարկումը:

Յուրահատուկ կապիտալների վարձատրություն

$$r_x = p_x \frac{dq_x}{dK_x} = p_x \left(\frac{2}{3} K_x^{-1/3} L_x^{1/3} \right)$$

Քանի որ $\tilde{L}_x = K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{3/2}$, ապա

$$\tilde{r}_x = p_x \left(\frac{2}{3} K_x^{-1/3} \left(K_x \left(\frac{p_x}{3w} \right)^{3/2} \right)^{1/3} \right) = \frac{2}{3^{3/2}} \frac{p_x^{3/2}}{w^{1/2}} = \frac{2}{3^{3/2}} \frac{p_x^{3/2}}{\left\{ \frac{1}{3} \right\}^{1/2} \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}}$$

Նմանապես.

$$\tilde{r}_y = \frac{2}{3^{3/2}} \frac{p_y^{3/2}}{w^{1/2}} = \frac{2}{3^{3/2}} \frac{p_y^{3/2}}{\left\{ \frac{1}{3} \right\}^{1/2} \left[\frac{K_x}{L} p_x^{3/2} + \frac{K_y}{L} p_y^{3/2} \right]^{1/3}}$$

Այսպիսով՝ ապրանքի գնի աճը բարձրացնում է այդ ապրանքի արտադրությունը յուրահատուկ ռեսուրսի վճարը և կրճատում է մյուս ապրանքի արտադրությունը յուրահատուկ ռեսուրսի վճարը: